

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մաքսային գործը բարդ համակարգ է, որի կառուցվածքային տարրերն ունեն իրավական, տնտեսական, կազմակերպական, ինչպես նաև բարոյահոգեբանական բնույթ:

Քաղաքական և սոցիալական հարաբերությունների բարեփոխման գործընթացում էական նշանակություն ունի անկախ պետական մաքսային քաղաքականության իրականացումը, որն իր մեջ ներառում է օրենսդրական և իրավական դաշտի ձևավորումն ու մշտական կատարելագործումը, ինչպես նաև երկրի ազգային տնտեսական շահերը պաշտպանելուն միտված ենթակառուցվածքային կառույցների համակարգի ստեղծումը: Մաքսային քաղաքականությունը տվյալ պետության համընդհանուր տնտեսական քաղաքականության անբաժանելի մասն է, որն ունի ոչ միայն տնտեսական, այլև իրավապահայան նպատակներ: Մաքսային քաղաքականության կարևորագույն որակական բնութագրիչներն անմիջականորեն կապված են արտաքին տնտեսական գործունեության կարգավորման սկզբունքի հետ¹:

Միջազգային ապրանքաշրջանառության ծավալների ավելացմանը զուգահեռ յուրաքանչյուր երկրի համար կենսական նշանակություն է ստանում արդյունավետ գործող մաքսային համակարգը:

Հայաստանի Հանրապետության իրավապահայան մարմինների համակարգում իրենց ուրույն տեղն ունեն մաքսային մարմինները, որոնք ապահովում են ՀՀ տնտեսական ինքնուրույնությունն ու անվտանգությունը:

Հետխորհրդային երկրներում մաքսային մարմինների գործունեությունն ընդունված է բնութագրել հետևյալ ուղղություններով՝

- պետական բյուջեի եկամտային մասի ապահովում (ֆիսկալային գործառույթ), որը համարվում է հիմնականը և ուղղված է ապահովելու մաքսային վճարների գանձման գործառույթի իրականացումը,
- մաքսային օրենսդրության պահանջների պահպանում և արտաքին տնտեսական գործունեության սպասարկում, որն էլ իր հերթին իրականացվում է մաքսային սահմանը հատելու ժամանակ մաքսային ձևակերպումների, մաքսային հսկողության, մաքսասակագնային կարգավորման գործիքների կիրառման միջոցով, իսկ մաքսային օրենսդրության պահանջների պահպանումն ուղղված է սահմանված մաքսային հսկողության, մաքսանենգության և մաքսային կանոնների վերաբերյալ մաքսային ընթացակարգերի պահպանմանը:

Հայաստանի Հանրապետությունում մաքսային կարգավորումն իրականացվում է մաքսային օրենսդրությանը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան մաքսային գործի իրականացման կարգի ու կանոնների սահմանման միջոցով:

Միջազգային անվտանգության ոլորտի մի շարք խնդիրների լուծման ժամանակ ՀՀ և այլ երկրների շահերի ամբողջությունը, որը ներառում է միջազգային տնտեսական ու ֆինանսական ինստիտուտների հետ համագործակցության ընդլայնումը, զանգվածային ոչնչացման զենքերի տարածման կանխարգելումը, միջազգային ահաբեկչության և թմրանյութերի վաճառքը, հանգեցնում է նոր խնդիրների առաջացման, որոնց կարգավորմանը պետք է մասնակցեն երկրի հետագա զարգացմանը նպաստող մաքսային մարմինները:

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ մաքսային գործն իրականացնող մաքսային մարմիններն են՝

¹ Основы таможенного дела: учебник / Под ред. В.Г. Драганова. — М. Экономика, 1998, Стр. 135-142.

- վերադաս մաքսային մարմինը,
- վերադաս մաքսային մարմնի մաքսատները, այդ թվում՝ տարածաշրջանային և մասնագիտացված,
- վերադաս մաքսային մարմնի մաքսային կետերը, այդ թվում՝ սահմանային և մասնագիտացված:

Մաքսային գործի ղեկավարումը, կազմակերպումն ու վերահսկողությունն իրականացնում է վերադաս մաքսային մարմինը, որի ենթակայության տակ են գտնվում տարածաշրջանային մաքսատները:

Մաքսային մարմինների համակարգում ներառվում են նաև մաքսային լաբորատորիաներն ու մասնագիտացված ուսումնական հաստատությունները, որոնք ստեղծվում են ՀՀ կառավարության կողմից՝ մաքսային գործի իրականացման նպատակներով ապրանքների փորձաքննության և հետազոտության, տվյալ բնագավառում գիտահետազոտական գործունեության իրականացման, կադրերի պատրաստման ու վերապատրաստման համար:

Ամբողջ աշխարհում երկրի ազգային անվտանգության և պաշտպանական կարողությունների ապահովումը պահանջում է զարգացած տնտեսություն:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, տնտեսական անվտանգության ապահովումը երկրի անկախության, հասարակության կայունության և արդյունավետ կենսագործունեության նախապայմանների, հաջողության հասնելու երաշխիքն է: Սա բացատրվում է նրանով, որ տնտեսությունը հասարակության, պետության ու անհատի գործունեության համար կենսական նշանակություն ունեցող հայեցակետերից մեկն է, և, արդյունքում, ազգային անվտանգության հայեցակարգն անիմաստ կլինի առանց տնտեսության կենսունակության, նրա՝ հնարավոր արտաքին և ներքին սպառնալիքներին դիմակայության գնահատման: Այդ իսկ պատճառով էլ տնտեսական անվտանգության ապահովումը պատկանում է կարևոր ազգային գերակայությունների թվին:

Պետության տնտեսական շահերի ապահովման գործում կարևոր դերակատարություն ունի մաքսային ծառայությունը՝ շուկայական ենթակառուցվածքի կարևորագույն տարրերից մեկը: ՀՀ մաքսային ծառայությունը ՀՀ մաքսային մարմինների միասնական կենտրոնացված համակարգն է, որի հիմնական խնդիրներն են ՀՀ մաքսային քաղաքականության իրականացումը, մաքսային գործի ու մաքսային մարմինների գործունեության արդյունավետ կազմակերպումը, ինչպես նաև ՀՀ մաքսային ծառայողների իրավունքների և պարտականությունների իրականացման ապահովումը: Մասնակցելով ներքին առևտրաշրջանառության կարգավորմանը և իրականացնելով ֆիսկալ գործառնություն, մաքսային ծառայությունը պարբերաբար թարմացնում է պետական բյուջեն ու դրանով իսկ նպաստում տնտեսական խնդիրների լուծմանը:

Ողջամիտ հովանավորչական միջոցառումների միջոցով մաքսային ծառայության պատասխանատվության տակ է գտնվում պետության արտաքին տնտեսական գործունեության ոլորտը:

Մաքսային ծառայությունը ԱՏԳ (արտաքին տնտեսական գործունեություն) պետական կարգավորման անբաժանելի մասն է, ակտիվորեն մասնակցում է դրա կարգավորմանը, այդ թվում՝ հայտարարագրվող տեղեկությունների և տրամադրվող փաստաթղթերի կարգավորման, ԱՏԳ գործառնությունների համակարգային հսկողության համար կազմակերպչական պայմանների ստեղծման ճանապարհով: Սա նշանակում է, որ արդի պայմաններում ՀՀ մաքսային ծառայությունը, հանդիսանալով պետության տնտեսական համակարգի բաղադրիչ, հարկման և ԱՏԳ կարգավորման ոլորտներում ավանդական գործառնությունների իրականացման հետ միասին, ավելի ու ավելի ակտիվորեն է հանդես գալիս որպես սոցիալ-տնտեսական ինստիտուտ, որում մաքսային ծառայությունը դրսևորվում է որպես պետական սպասարկման համակարգի բաղադրիչ: Սույն ինստիտուտը փաստացի ստեղծում է (իսկ անարդյունավետ գործունեության դեպքում՝ չի ստեղծում) արտաքին առևտրի զարգացման համար անհրաժեշտ բարենպաստ պայմաններ՝ դրանով իսկ նպաստելով երկրի մուտքը դեպի համաշխարհային շուկաներ:

Գոյություն ունեն երկրի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացման որոշակի ցուցանիշներ, այդ թվում՝

- արտաքին առևտրի դինամիկ փոփոխությունները,

- առևտրաշրջանառության, արտահանման, ներմուծման ծավալները,
- արտահանվող և ներմուծվող ապրանքների գների դինամիկ փոփոխությունները,
- արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքի փոփոխությունը,
- երկրի մասնաբաժինը համաշխարհային առևտրաշրջանառության մեջ,
- օտարերկրյա ներդրումները,
- արտաքին պարտքի կառուցվածքն ու դինամիկ փոփոխությունները,
- արտաքին առևտրային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը:

Արտաքին տնտեսական հարաբերություններում երկրի մասնակցության աստիճանը բնութագրվում է մի շարք ցուցանիշներով, որոնց թվին են պատկանում ազգային տնտեսության բացության գործակիցը՝ արտահանման, ներմուծման ծավալների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը, ներմուծումը արտահանմամբ ծածկելու գործակիցը, արտահանման և ներմուծման ապրանքային կառուցվածքը, ճգնաժամային ներմուծման ապրանքային կառուցվածքը, բնակչության մեկ շնչին ընկնող ներմուծման և արտահանման մասնաբաժինը, ներմուծման մասնաբաժինը սպառողական ապրանքների ընդհանուր ծավալում, երկրի մասնաբաժինը համաշխարհային առևտրում (արտահանման, ներմուծման), օտարերկրյա ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում, օտարերկրյա ներդրումների ծավալն ու կառուցվածքը, օտարերկրյա և համատեղ (միասնական) ձեռնարկությունների կողմից արտադրվող ապրանքների ծավալը, ներգրավված կապիտալի և արտահանված ներքին կապիտալի ծավալների միջև հարաբերակցությունը, գների հարաբերակցությունը արտաքին և ներքին շուկաներում, արտահանված արտադրանքի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, արտահանման (ներմուծման) ընդհանուր ծավալում գիտելիքահենք արտադրանքի արտահանման (ներմուծման) մասնաբաժինը: Վերոնշյալներից ներկայացնենք ՀՀ տնտեսությունը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշներից հետևյալները (տե՛ս աղյուսակ 1-ը):


Աղյուսակ 1

ՀՀ տնտեսությունը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները՝ ըստ 2007-2015 թթ.¹

Տարի	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Արտահանում, մլն. ԱՄՆ դոլար	1152.3	1057.2	710.2	1041.1	1334.3	1380.2	1478.7	1547.3	1486.9
Արտահանում/ՀՆԱ, %	12.5	9.1	8.2	11.2	13.2	13.9	14.2	14.2	14.1
Ներմուծում, մլն. ԱՄՆ դոլար	3267.8	4426.1	3321.1	3749.0	4145.3	4261.2	4385.9	4424.4	3254.0
Ներմուծում/ՀՆԱ, %	35.5	38.0	38.4	40.5	40.9	42.8	42.0	40.6	30.9

Աղյուսակ 1-ում կարելի է նկատել, որ վերջին տարիներին ավելացել են արտահանման ծավալները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է արտահանում/ՀՆԱ ցուցանիշի աճին: 2015 թվականին էապես նվազել են ներմուծման ծավալները՝ հանգեցնելով ներմուծում/ՀՆԱ ցուցանիշի նվազմանը: Միևնույն ժամանակ, ինչպես կարելի է նկատել գծապատկեր 1-ում, կանխատեսվող ժամանակահատվածում երկրի տնտեսության բացության աստիճանը (արտաքին տնտեսական շրջանառության և ՀՆԱ-ի հարաբերակցություն) էականորեն չի փոփոխվի, քանի որ արտահանման աճին զուգընթաց հարաբերականորեն կկրճատվեն ներկրման ծավալները: Սույն ցուցանիշը ծրագրավորվող ժամանակահատվածում կտատանվի ՀՆԱ-ի 74-78 % -ի միջակայքում:

¹ Տվյալները վերցված են՝ <http://minfin.am/>



Գծապատկեր 1. ՀՀ արտահանումը, ներմուծումը և ապրանքների ու ծառայությունների կանխատեսումային հաշվեկշիռը 2012-2025 թթ. (տոկոս՝ ՀՆԱ-ի նկատմամբ)¹

Յուրաքանչյուր երկրի առանցքային խնդիրներից է հանդիսանում երկրի տնտեսական ինքնիշխանությունը (գերիշխանությունը): Մաքսային մարմինները, որոնք ապահովում են երկրի տնտեսական ինքնիշխանությունը, իրականացնում են իրավապահպան և տնտեսական նպատակների նվաճումն ու հայրենական տնտեսության խթանումը, սակագնային ու ոչ սակագնային կարգավորումների կիրառման միջոցով պաշտպանում են տեղական արտադրողների և շուկաների շահերը:

ՀՀ-ում մաքսային մարմինների գործունեությունն ուղղված է կանխելու ընկերությունների կողմից իրականից ցածր մաքսային արժեքով մաքսային վճարների գանձումը, որի նպատակով մաքսային մարմինները դիտարկում են ավելի բարձր մաքսային արժեք: Ներկայումս մաքսային մարմինների գործունեության հետևանքով առաջանում են բացասական երևույթներ, ուստի՝ դրանց վերացման ուղի է մաքսային արժեքի որոշման կարգի պարզեցումը: Այսինքն, մաքսային մարմիններն իրենց գործունեությունը պետք է ուղղեն ինչպես իրականից ցածր, այնպես էլ իրականից բարձր մաքսային արժեքի հայտարարագրման բացառմանը, որն էլ իր հերթին կարող է պետական բյուջետային եկամուտների գանձման գործում գործունեության արդյունավետության բարձրացման գրավական դառնալ:

ՀՀ-ում մաքսային համակարգի բարեփոխման, ընթացակարգերի պարզեցման, տեխնիկապես հագեցման և միջազգային ստանդարտների համապատասխանելու համար նախաձեռնված աշխատանքներն արդյունավետ իրականացնելու նպատակով կարևոր է ուսումնասիրել և ներդնել զարգացած երկրների մաքսային համակարգերի լավագույն փորձը: Եվրամիության երկրները բազմիցս պատրաստակամություն են հայտնել օգնել ՀՀ-ին այս գործում, և եթե հաշվի առնենք այն, որ Եվրամիությունը մշակել է բոլոր ոլորտների, այդ թվում նաև մաքսային ոլորտի լավագույն փորձի ներդրման ուղեցույցներ, ՀՀ մաքսային մարմինների խնդիրն այս տեսանկյունից բավական դյուրին կլինի:


Մաքսային մարմինների կատարելագործման և Եվրամիության լավագույն փորձի ներդրման նպատակով, Եվրոպական Հանձնաժողովի հարկային և մաքսային հարցերով հանձնախմբի (TAXUD) ու Եվրամիության անդամ պետությունների մաքսային ծառայությունների փորձագետները մշակել են Եվրամիության «Օրինակելի մաքսային ծառայություն» (Customs Blueprints) ձեռնարկը:

Ձեռնարկն, ընդհանուր առմամբ, բաղկացած է «Նպատակներ», «Ռազմավարական նպատակներ», «Առանցքային ցուցանիշներ» և «Հղումներ» բաժիններից:


¹ <http://www.gov.am/files/docs/1322.pdf>, Աղբյուրը՝ հաշվարկված է ՀՀ ԱԳՄ տվյալների հիման վրա, ՀԶՄ կանխատեսումներ:

ՀՀ-ում ձեռնարկի կիրառման հիմնավորվածությունը, արդյունավետությունն ու թե հատկապես որ ոլորտներն են ներկա փուլում մաքսային մարմինների համար համարվում է առաջնային, բացատրվում է նրանով, որ բարեփոխումների գործընթացում գտնվող բոլոր երկրները օգտագործում են այս ձեռնարկում նշված բոլոր չափորոշիչները՝ համեմատության միջոցով փորձելով ի հայտ բերել սեփական երկրի բացթողումները:

ՀՀ մաքսային մարմինները ռեսուրսների արդյունավետ բաշխման նպատակով, վերլուծելով իրենց ծանրաբեռնվածությունը և հիմք ընդունելով ՀՀ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը, պետք է հաշվարկեն ընդհանուր ներմուծման և արտահանման մեջ կազմակերպությունների, մասնավորապես խոշոր կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց կողմից իրականացվող ներմուծումների ու արտահանումների, մաքսային սահմանով տեղափոխվող՝ առավել բարձր մաքսային արժեք ունեցող ապրանքների, առանձին տրանսպորտային միջոցներով մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների տեսակարար կշիռները (տե՛ս գծապատկեր 2-ը և 3-ը): Կենտրոնացնելով ռեսուրսներն առավել բարձր տեսակարար կշիռ ունեցող ներմուծումների և արտահանումների վրա՝ մաքսային մարմինները կկարողանան նշանակալի ազդել մաքսային կանոնների պահպանման գործընթացի վրա:



Գծապատկեր 2. Ֆիզիկական անձանց, կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կատարված արտահանումը՝ ըստ 2006-2014 թթ.¹




Գծապատկեր 3. Ֆիզիկական անձանց, կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կատարված ներմուծումը՝ ըստ 2006-2014 թթ.²

¹ Տվյալները վերցված են՝ <http://www.customs.am/> կայքից:


² Տվյալները վերցված են՝ <http://www.customs.am/> կայքից:

Մասնավորապես՝ գծապատկեր 2-ից և 3-ից երևում է, որ է, որ 2006-2014 թթ. ՀՀ ընդհանուր արտահանումների մեջ ֆիզիկական անձանց մասնաբաժինը չի գերազանցում 3%-ը, իսկ ընդհանուր ներմուծումների մեջ՝ 7%-ը: Հետևաբար՝ ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված ֆինանսական մեծ ռիսկեր պետությունը չի կրում, և այդ ուղղությամբ մաքսային մարմինները պետք է կենտրոնացնեն նվազագույն ռեսուրսներ՝ փոխարենն առկա ռեսուրսները բաշխելով կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության ուղղությամբ:

Ինչպես կարելի է նկատել գծապատկեր 4-ից և 5-ից, պատկերը չի փոխվել նաև 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում: 2015թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ընդհանուր արտահանումների մեջ ֆիզիկական անձանց մասնաբաժինը կազմել է 1%, իսկ ընդհանուր ներմուծումների մեջ՝ 3%:



Գծապատկեր 4. ՀՀ ընդհանուր արտահանումների մեջ ֆիզիկական անձանց մասնաբաժինը 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում¹



Գծապատկեր 5. ՀՀ ընդհանուր ներմուծումների մեջ ֆիզիկական անձանց մասնաբաժինը 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում²

Բացի այդ, մեր հաշվարկների համաձայն՝ 2016թ. ՀՀ 100 խոշոր հարկ վճարողների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը կազմել է 442.9 միլիարդ դրամ, որից 23.72 %-ը՝ 105.1 միլիարդ դրամ, հավաքագրվել են մաքսային մարմինների կողմից ³ :


Ուստի՝ պետության ֆինանսական ռիսկերի հավանականությունն էլ ավելի կնվազի, եթե մաքսային մարմիններն առավել մեծ ռեսուրսներ կենտրոնացնեն նշված խոշոր կազմակերպությունների կողմից մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության ուղղությամբ:

¹ Տվյալները վերցված են՝ <http://www.customs.am/> կայքից:


² Տվյալները վերցված են՝ <http://www.customs.am/> կայքից:

³ Տվյալները վերցված են՝ www.taxinfo.am, www.minfin.am և www.customs.am կայքերում տեղադրված տեղեկատվության հիման վրա:

Ինչ վերաբերում է տրանսպորտի առանձին տեսակներով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներին, գծապատկեր 6-ից և 7-ից պարզ է դառնում, որ 2016թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ներմուծումների և արտահանումների 70%-ը բաժին է ընկել երկաթուղային ու ավտոմոբիլային տրանսպորտին: Հետևաբար՝ մաքսային մարմինները պետք է իրենց ռեսուրսներն առավելապես կենտրոնացնեն հենց այդ միջոցներով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության վրա:



Գծապատկեր 6. 2016թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում տրանսպորտի առանձին տեսակներով ՀՀ ներմուծումները¹



Գծապատկեր 7. 2016թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում տրանսպորտի առանձին տեսակներով ՀՀ արտահանումները²

Այսպիսով՝ ռիսկերի կառավարման համակարգը պետք է մաքսային մարմիններին թույլ տա արդյունավետ բաշխել առկա ռեսուրսները: Դա ապահովում է ԱՀԿ-ի առջև դրված խնդիրների լուծումը՝ ստեղծել բարենպաստ պայմաններ արտաքին տնտեսական օրինական գործունեության համար, կրճատել մաքսային հսկողության տևողությունը՝ միաժամանակ պահպանելով դրա բարձր արդյունավետությունը:

Վերոնշյալները թույլ են տալիս կատարելու որոշակի եզրակացություններ ու առաջարկություններ, որոնց էությունը հետևյալներն են.

1. Քաղաքական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների անընդհատ փոփոխվող պայմաններում մաքսային մարմինները ստիպված են անընդհատ զարգանալ, և այդ զարգացումը ոչ միայն բնական էվոլյուցիայի հետևանք է, այլ նաև համաշխարհային և ազգային ինստիտուցիոնալ կառույցների նպատակաուղղված գործունեության արդյունք:
2. Միջազգային առևտրի ծավալների մեծացման, տնտեսական ինտեգրացիայի բարձր աստիճանի համատեքստում մաքսային մարմինը ևս պետք է դրսևորի վերակառուցման, ժամանակին համընթաց դինամիկ զարգացմանն ուղղված քաղաքականություն: Հետևաբար ՀՀ մաքսային մարմինն իր առջև դրված խնդրի լուծման կարևոր բաղադրիչ է համարում հստակ պլանավորված միջոցառումների կատարմանն ուղղված քայլերի իրականացումը,

¹ Տվյալները վերցված են՝ <http://www.customs.am/> կայքից:

² Տվյալները վերցված են՝ <http://www.customs.am/> կայքից:

- որոնք էլ իրենց հերթին կապահովեն իրենց առջև դրված նպատակների և խնդիրների լուծումը:
3. ՀՀ մաքսային մարմիններում դեռևս սուր խնդիր է մնում ապրանքների մաքսային արժեքի նվազեցումն ու արտաքին առևտրային գործունեության մասնակիցների կողմից դրանց անարժանահավատ հայտարարագրումը:
 4. Լիովին չեն կիրառվում առևտրալոգիստիկական տեխնոլոգիաների իրականացմանն աջակցող միջազգային ստանդարտները: Զարգացած չէ գնագոյացման, արտասահմանյան երկրներում առևտրաարդյունաբերական մասնագիտացման, աշխատանքի բաժանման համաշխարհային միտումների մասին ՀՀ մաքսային մարմինների տեղեկացվածության համակարգը:
 5. ՀՀ մաքսային մարմիններն անարդյունավետ են իրականացնում երկրի մաքսային տարածքում շրջանառության մեջ բաց թողնված ապրանքների վերահսկողությունը (աուդիտի մեթոդների վրա հիմնված վերահսկողություն):
 6. Ոչ բավականաչափ է իրականացվում ՀՀ մաքսային մարմինների գործունեության տեղեկատվավերլուծական ապահովումը, այդ թվում օպերատիվ-հետախուզական: Շարունակում է ցածր մնալ ՀՀ մաքսային մարմինների օպերատիվ (գործադրական) ստորաբաժանումների և այլ իրավապահ ու վերահսկող մարմինների փոխգործակցության մակարդակը:
 7. Ոչ բավարար է զարգացած մաքսային մարմինների համար կադրերի պատրաստման և վերապատրաստման համակարգը, մասնավորապես կառավարման և վերահսկողության ոլորտի մասնագետների:
 8. Բարձր է մնում մաքսային մարմիններում կոռուպցիայի մակարդակը:
 9. Վերոնշյալ խնդիրների առկայությունը հանգեցնում է մաքսային վարչարարության արդյունավետության նվազեցման, անբարեխիղճ մրցակցության, ներմուծվող անորակ ապրանքների ներթափանցման տեղական շուկա և այլ բացասական երևույթների:
 10. Անհրաժեշտություն է առաջանում ձևավորել մաքսային վարչարարության նոր մոտեցումներ, որոնք մաքսային մարմիններին թույլ կտան արդյունավետ արձագանքել միջազգային փորձին և հասարակության ու պետության պահանջներին համապատասխան տեղի ունեցող փոփոխություններին:
 11. Անհրաժեշտ է մշակել մաքսային գործի ոլորտում նպատակներին հասնելու միջազգային ստանդարտներին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան առավել արդյունավետ մեթոդներ:
 12. Այսպիսով, մաքսային մարմնի համար զարգացման հեռանկարն է միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան մաքսային համակարգի առկայությունը՝ ապահովելով, այդ թվում.
 - արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներին բարձրորակ մաքսային ծառայությունների մատուցում,
 - արդյունավետ մաքսային հսկողություն,
 - պետական բյուջե մուտքագրվող մաքսային և այլ եկամուտների սահմանված ժամկետներում հավաքագրում:

ՄԱԶՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՏԱԹԵՎԻԿ ՎԱԶԳԵՆԻ ՇԱԴԻՆՅԱՆ

*ՀՀ ԳԱՄ Մ Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրվել են ՀՀ մաքսային քաղաքականության իրականացումը, ինչպես նաև մաքսային գործի ու մաքսային մարմինների գործունեության արդյունավետ կազմակերպումը:

Հաշվի առնելով տնտեսության մեջ մաքսային մարմինների դերն ու նշանակությունը, նրանց գործունեության բարելավման նպատակով անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել մաքսային հսկողության մեթոդների կատարելագործման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին՝ այդ նպատակով առավելագույնս կիրառելով միջազգային համագործակցության շրջանակներում այլ պետություններից, ինչպես նաև ՀՀ պետական իրավասու մարմիններից ստացված տեղեկությունները:

Բանալի բառեր. *Մաքսային գործ. մաքսային քաղաքականություն, մաքսային մարմիններ, տնտեսական անվտանգություն, մաքսային ծառայություն, ներմուծում, արտահանում, արտաքին տնտեսական գործունեություն:*

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ТАМОЖЕННЫХ ОРГАНОВ В ЭКОНОМИКЕ

ТАТЕВИК ВАЗГЕНОВНА ШАГИНЯН

*младший научный сотрудник
Института экономики имени М. Котаняна НАН РА*

Аннотация

В статье рассмотрены вопросы осуществления таможенной политики, а также эффективной организации таможенного дела и деятельности таможенных органов. Учитывая роль и значение таможенных органов в экономике, с целью улучшения их деятельности необходимо особое внимание обратить на работы по совершенствованию методов таможенного контроля путем оптимального применения сведений, полученных от других государств в рамках международного сотрудничества, а также государственных уполномоченных органов РА.

Ключевые слова: *таможенное дело, таможенная политика, таможенные органы, экономическая безопасность, таможенная служба, импорт, экспорт, внешнеэкономическая деятельность.*

THE ROLE AND MEANING OF CUSTOMS AUTHORITIES IN THE ECONOMY

TATEVIK VAZGEN SHAHINYAN

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article discusses the issues of carrying out the customs policy, and the efficacy of organizing of customs activities and customs authorities as well. Given the role and importance of customs authorities in the economy, and in order to increase the efficacy of their activities it is required to pay a special attention to improving the methods of customs control by effectively using and applying the information received from the other states within the international cooperation, and from the respective public institution in the Republic of Armenia as well.

Keywords: *Customs activity, customs policy, customs authorities, economic security, customs authorities, import, export, external economic activity*